ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-ԻՆ ԿՆՔՎԱԾ «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ » N ԿԴ-1192/11006 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 31 հոկտեմբերի 2023թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետև՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղարի Համիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Կրթության զարգացման նորարարական ազգային կենտրոն» հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրենի ժ/պ Արտաշես Թորոսյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով 2023 թվականի հունվարի 20-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» NԿԴ-1192/11006 պայմանագրի (այսուհետև՝«Պայմանագիր») 8.1 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1.ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին պայմանագրի 1.2 կետի անբաժանելի մասը կազմող հավելվածը խմբագրել նոր բովանդակությամբ համաձայն հավելված 1-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարություն | «Կրթության զարգացման նորարարական ազգային կենտրոն»հիմնադրամ |
| ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2 | ք. Երևան, Տիգրան Մեծ 67 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | ԱԳԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ |
| Հ/Հ 900011005403 | Հ/Հ 220303350429000 |
| ՀՎՀՀ 02698732 | ՀՎՀՀ 02657678 |
| Գլխավոր քարտուղար՝ | Գործադիր տնօրենի ժ/պ՝ |
| _______ Հ. Հակոբյան (ստորագրություն) | _______ Ա. Թորոսյան (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված 1
31.10.2023թ. կնքված N 1 Համաձայնագրի
N ԿԴ-1192/11006 Հավելված 2023թ. հունվարի 20-ին
կնքված պայմանագրի

# ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

## «1192.Կրթության որակի ապահովում» ծրագիր «11006.Կրթության բովանդակային և մեթոդական սպասարկում» միջոցառման

| NN ը/կ | Իրականացվելիք միջոցառման | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | համառոտ բովանդակությունը | կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները | վերջնաժամկետը | պահանջվող գումարը |
| 1 | Նոր չափորոշիչների և ծրագրերի փորձարկում և ներդրում | Տավուշի մարզում նոր չափորոշիչների և ծրագրերի փորձարկում 1,4,9,12-րդ դասարաններում: | • Կազմակերպել ուսումնական նյութերի մշակում 1,4,9,12-րդ դասարաններում դասավանդվող բոլոր առարկաների համար:<br>• Իրականացնել ուսումնական նյութերի տպագրություն 1,4,9,12-րդ դասարանների սովորողների թվով:<br>• Իրականացնել 250 ուսուցչի վերապատրաստում: Այդ նպատակով կազմակերպել 4 հեռավար սեմինար:<br>• Կազմակերպել ուսուցիչների և տնօրենների աշխատանքի մշտադիտարկում և խորհրդատվություն: Կազմակերպել մեթոդական աջակցության ամիսը 1 առկա և 4 հեռավար սեմիանր: | • 1,4,9,12-րդ դասարանների սովորողները կունենան դասագրքին զուգահեռ օգտագործվող ուսումնական նյութեր, որոնք լրացնում են դասագրքերը ծրագրերում առկա փոփոխությունների տեսանկյունից:<br>• Ուսուցիչները կունենան նոր ծրագրերով ուսուցում իրականացնելու հնարավորություն:<br>• Տնօրենները և ուսուցիչները կստանան մեթոդական օժանդակություն: | • Նյութերի մշակում 30.06.2023<br>• Վերապատ-րաստումներ 30.08.2023<br>• Մեթոդական աջակցություն 30.12.2023 | 41,457,500 |
| | | ՀՀ 9 մարզում և Երևան քաղաքում նոր չափորոշիչների և ծրագրերի ներդրում 2,5,7,10-րդ դասարաններում: | • Իրականացնել մենթոր դպրոցների տնօրենների, տնօրենի տեղակալների և մեթոդմիավորման նախագահների վերապատրաստողների վերապատրաստում: **Իրականացվելու է ԿԶՆԱԿ-ի** | • Վերապատրաստվել են 500 վերապատրաստող: | • Վերապատրաստողների վերապատրաստում 28.02.2023<br>• Վերապատրաստումներ 20.12.2023<br>• Կարիքների գնահատում, խորհրդատվության | 75,797,600 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | **մասնագետների կողմից:**<br><br>• Կազմակերպել հանրապետության բոլոր մարզերի (բացի Տավուշի մարզից) տնօրենների, տնօրենի տեղակալների և ուսուցիչների վերապատրաստումներ: **Իրականացվելու է մենթոր դպրոցների կողմից նրանց տրված դրամաշնորհի շրջանակներում:**<br><br>• Կազմակերպել հանրապետության բոլոր մարզերի (բացի Տավուշի մարզից) ուսուցիչների (2,5,7-րդ դասարաններում նոր դասաբաշխում ստացած, նոր ընդունված, 36 խումբ: **Իրականացվելու է մենթոր դպրոցների կողմից նրանց տրված դրամաշնորհի շրջանակներում:**<br><br>• Կազմակերպել հանրապետության բոլոր մարզերի (բացի Տավուշի մարզից) ուսուցիչների (առողջ ապրելակերպ դասընթացը վարող) վերապատրաստումներ 73 խումբ: **Իրականացվելու է մենթոր դպրոցների կողմից նրանց տրված դրամաշնորհի շրջանակներում:** | • Վերապատրաստվել են 27727 ուսուցիչ, տնօրեն և տնօրենի տեղակալ:<br><br>• Վերապատրաստվել են նախորդ վերապատրաստումներին չմասնակցած (2,5,7-րդ դասարաններում նոր դասաբաշխում ստացած, նոր ընդունված, (36 խումբ) որի մեջ ընդգրկվել են 800 ուսուցիչ:<br><br>• Տնօրենները, տնօրենի տեղակալները և ուսուցիչները կկարողանան կազմակերպել ուսուցումը նոր չափորոշիչների պահանջներին համապատասխան:<br>• Հանրապետության բոլոր դպրոցների մեկ կամ երկու ուսուցիչ (կախված դպրոցում դասարանների թվից) վերապատրաստվել են առողջ ապրելակերպի դասընթաց վարելու համար: | տրամադրում և սեմինարների կազմակերպում:<br>20.12մանկ.2023 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | • Կազմակերպել հանրապետության բոլոր մարզերի տնօրենների, տնօրենի տեղակալների և ուսուցիչների կարիքների գնահատում, խորհրդատվություն, սեմինարներ: **Իրականացվելու է մենթոր դպրոցների կողմից նրանց տրված դրամաշնորհի շրջանակներում:** | • Գնահատվել են հանրապետության բոլոր դպրոցների տնօրենների և տնօրենի տեղակալներների, ուսուցիչների կարիքները, տրվել է խորհրդատվություն, կազմակերպվել են կարիքներից բխող սեմինարներ: | | |
| | | Չափորոշչի ներդրման արդյունքների գնահատում: | • Կիրականացվեն չափորոշչի ներդրման արդյունքների գնահատում: | • Կգնահատվեն Տավուշի մարզի դպրոցներում ՀՊՉ փործարմանան արդյունքները: <br>• Կգնահատվեն հանրապետության բոլոր մարզերի (բացի Տավուշի մարզի) դպրոցներում ՀՊՉ փործարմանան արդյունքները: | • Տավուշի մարզում 30.06.2023 <br>• Մյուս մարզերում 15.12.2023 | 21,810,820 |
| 2 | Գնահատման մեթոդաբանությա ն մշակում | Գնահատման կարողությունների զարգացմանը ուղղված մեթոդական նյութերի և ուղեցույցների մշակում և առկա/հեռավար վերապատրաստումների իրականացում: | • Գնահատման կարողությունների զարգացմանը ուղղված մեթոդական նյութերի և ուղեցույցների մշակում: <br>• Ձևավորող գնահատման կարիքների գնահատման իրականացում հանրապետության բոլոր մարզերում: <br>• Գնահատման կարողությունների զարգացման առկա և հեռավար դասընթացների մշակում և իրականացում (8 առկա և 5 հեռավար սեմինար յուրաքանչյուր կիսամյակում): | • Մանկավարժական աշխատողները կունենան գնահատման մեթոդական ուղեցույց: <br>• Վերապատրաստումներին մասնակցել են ուսումնական հաստատությունների 500 (առկա) և 500 (հեռավար) մանկավարժական աշխատող: | • Մեթոդական ուղեցույց 01.03.2023 <br>• Վերապատ րաստումներ 15.12.2023 | 35,466,340 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Գնահատման մեթոդաբանության ներդրման արդյունքների գնահատում: | • Կիրականացվեն գնահատման մեթոդաբանության ներդրման արդյունքների գնահատում: | • Կգնահատվեն Տավուշի մարզի դպրոցներում գնահատման մեթոդաբանության փորձարկման արդյունքները:<br>• Կգնահատվեն հանրապետության բոլոր մարզերի (բացի Տավուշի մարզի) դպրոցներում գնահատման մեթոդաբանության փորձարկման արդյունքները: | • Տավուշի մարզում 30.06.2023<br>• Մյուս մարզերում 15.12.2023 | |
| 3 | Ուսուցման մեթոդների և ռազմավարությու նների մշակում և վերապատրաստո ւմ | Երկարօրյա ուսման մեջ ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար կազմակերպելու մեթոդական աջակցության իրականացում | • Կիրականացվեն երկարօրյա դասեր կազմակերպող ուսուցիչների առկա և հեռավար վերապատրաստումներ: Ամեն ամիս կիարականացվի 1 առկա և 1 հեռավար վերապատրաստում (ընդամենը 12 առկա և 12 հեռավար):<br>• Դպրոցների տնօրենների համար կիարականացվեն երկարօրյա դասերը պլանավորելու, կազմակերպելու և արդյունքները գնահատելու վերապատրաստումներ: | • Ուսուցիչները կարող են իրականացնել երկարօրյա դասեր:<br>• Դպրոցների տնօրենները կարող են պլանավորել, կազմակերպել և արդյունքները գնահատել երկարօրյա դասերը: | • Ուսուցիչների վերապատրաստումներ 15.12.2023<br>• Տնօրենների վերապատրաստումներ 15.12.2023 | 55,494,436 |
| | | Ընթերցանության որակի ապահովման ծրագրի իրականացում տարրական դպրոցում: | • Կիրականացվեն ընթերցանության որակի գնահատման և ապահովման մեթոդների ուսուցման առկա սեմինարներ: Ամեն ամիս կիրականացվի 2 սեմինար (ընդամենը 24 սեմինար):<br>• Կիրականացվի ընթերցանության որակի արտաքին գնահատում: | • Տարրական դպրոցի մայրենիի ուսուցիչները (դասվարները) կարողան են ապահովել ընթաերցանությա որակը սահմանված պահանջների առնվազն նվազագույնի չափով:<br>• Կգնահատվի ընթերցանության որակը 50 դպրոցում: | • Սեմինարներ 15.12.2023<br>• Գնահատում 30.06.2023 և 15.12.2023 | |
| | | Առարկաների դասավանդման մեթոդների | • Կստեղծվի առցանց հարթակի:<br>• Առցանց հարթակում նյութեր կտեղադրեն: | • Ուսուցիչները կկարողանան ծանոթանալ մեթոդներին և դրանք | • 30.11.2023 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ներկայացման առցանց հարթակի ստեղծում | | կիրառել իրենց աշխատանքի մեջ: | | |
| | | Ուսուցման մեթոդների և ռազմավարությունների ներդրման արդյունքների գնահատում: | • Կիրականացվեն ուսուցման մեթոդների և ռազմավարությունների ներդրման արդյունքների գնահատում: | • Կգնահատվեն երկարօրյա դասերի, ըթերցանության որակի, մեթոդների ներկայացման հարթակի արդյունավետության, հանրակրթական համակարգի զարգացման վրա ազդեցությունը: | • Առաջին հետազոտություն 30.06.2023<br>• Երկրորդ հետազոտություն 15.12.2023 | |
| 4 | Աջակցություն հանրակրթական ուսումնական հաստատությունն երի ուսուցիչների պարտադիր ատեստավորման վերապատրաստո ւմների կազմակերպմանը | Պարտադիր ատեստավորման համար ուսուցիչների վերապատրաստումների արդյունքների մշտադիտարկում: | • Վերապատրաստող կազմակերպությունների կողմից իրականացվող վերապատրաստումների մշտադիտարկում:<br>• Վերապատրաստված 1000 ուսուցչի մոտ վերապատրաստման արդյունքում մասնագիտական զարգացման գնահատում դասալսումների, փաստաթղթերի ուսումնասիրության և հարցազրույցների միջոցով: | • Վերապատրաստող կազմակերպությունները կազմակերպում են վերապատրաստումները սահմանված գարգի պահանջներին համապատասխան:<br>• Ուսուցիչները իրենց աշխատանքի ընթացքում կիրառում են մասնագիտական զարգացման ընթացքում սովորած մեթոդները և ռազմավարությունները:<br>• Մշտադիտարկումների ընթացքում բացահայտված բացթողումները վերացվել են: | • Կազմակեր պությունների 1.11.2023<br>• Ուսուցիչներ 15.12.2023 | 49,121,860 |
| | | • Հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների պարտադիր ատեստավորման վերապատրաստման արդյունքների գնահատում: | • Վերապատրաստող կազմակերպությունների մոտ վերապատրաստման իրականացման մշտադիտարկման արդյունքների վերլուծություն և առաջարկությունների մշակում:<br>• Վերապատրաստված ուսուցիչների մոտ դասալսումների արդյունքների վերլուծություն և առաջարկությունների մշակում: | • Կներկայացվեն վերապատրաստումների կազմակերպման և ուսուցիչների մասնագիտական զարգացման արդյունքների մասի վերլուծություն և առաջարկություններ: | • Կազմակերպ ությունների 30.11.2023<br>• Ուսուցիչների 15.12.2023 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5 | Ներդպրոցական վերահսկողության մեթոդների և ռազմավարությունների մշակում և վերապատրաստում | Նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենների և տնօրենի տեղակալներիվերապատրաստումներ: | • Կիրականացվեն նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենների և տնօրենի տեղակալների վերապատրաստումներ: Կվերապատրաստվի 180 տնօրեն և տնօրենի տեղակալ: | • Կվերապատրաստվի նախադպրոցական ուսումնական հաստատությ180 տնօրեն և տնօրենի տեղակալ: | • Վերապատրաստումներ 30.08.2023 | 1,012,000 |
| | | Դպրոցների տնօրենների և տեղակալների վերապատրաստումներ: | • Դպրոցների տնօրենների և տեղակալների ներդպրոցական վերահսկողության առկա և հեռավար վերապատրաստումներ: Կիարականացվեն ամիսը 1 առկա և 1 հեռավար վերապատրաստում (ընդամենը 12 առկա և 12 հեռավար վերապատրաստում): Կվերապատրաստվեն 500 տնօրեն և տնօրենի տեղակալ: | • Դպրոցների տնօրենները և տնօրենի տեղակալները կիրականացնեն ներդպրոցական վերահսկողություն: | • Վերապատրաստումներ 15.11.2023 | 26,362,660 |
| | | Ներդպրոցական վերահսկողության կազմակերպման ուղեցույցի մշակում: | • Կմշակվի ներդպրոցական վերահսկողության կազմակերպման ուղեցույց: | • Դպրոցների տնօրենները ներդպրոցական վերահսկողություն իրականացնելիս կօգտագործեն ուղեցույցը: | • 30.06.2023 | |
| | | Ներդպրոցական վերահսկողության մեթոդների և ռազմավարությունների ներդրման արդյունքների գնահատում: | • Կիրականացվի Ներդպրոցական վերահսկողության մեթոդների և ռազմավարությունների ներդրման արդյունքների ուսումնասիրություն և վերլուծություն: | • Կներկայացվի Ներդպրոցական վերահսկողության մեթոդների և ռազմավարությունների ներդրման արդյունքների հետազոտությունների իրականացման մասին հաշվետվություն: | • 30.11.2023 | |
| 6 | Կրթության մեջ նորարարությունների ուսումնասիրություն, մեթոդների և ռազմավարությունների մշակում և | Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրություն և տարածում | • Կրթության համաշխարհային զարգացումների ուսումնասիրություն և նորարական մոտեցումների փորձարկում ուսումնական հաստատություններում:<br>• Ուսումնական | • Կրթության համաշխարհային զարգացումները և նորարական մոտեցումները հայտնի կլինեն դպրոցների մանկավարժական | • 30.11.2023 | 28 190 784 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | վերապատրաստումների իրականացում | | հաստատություններում իրականացվող նորարական ծրագրերի և նախագծերի մշտադիտարկում և գնահատում: | աշխատողներին:<br>• Դրանք փորձնական եղանակով իրականացվում են որոշ ուսումնական հաստատություններում:<br>• Ուսումնական հաստատություններում իրականացվող նորարական ծրագրերը և նախագծերը օգտագործվում են այլ դպրոցների կողմից: | | |
| | | Կրթություն հանուն կայուն զարգացման: Փոխակերպվող կրթություն (UNESCO) | • Փոխակերպվող կրթություն մասին UNESCO-ի 1974թ. փոփոխված փաստաթղթի պահանջների կատամանը ուղղված նախագծերի մշակում: | • Կիրականացվեն փոխակերպվող կրթություն մասին UNESCO-ի 1974թ. փոփոխված փաստաթղթի պահանջներին համապատասխան նախագծեր : | • 30.11.2023 | |
| | | Հայրենագիտության ուսումնական նախագիծ մարզերի դպրոցների սովորողների փոխանակմամբ: | • Հայրենագիտության ուսումնական նախագծերի իրականացում մարզերի դպրոցների սովորողների փոխանակման ծրագրի միջոցով: Կմասնակցի 60 սովորող: | • Սովորողները կկարողանան իրականացնել ուսումնական նախագծեր:<br>• Սովորողները կճանաչեն ՀՀ տարբեր մարզերի աշխարհագրությունը, ավանդույթները և մշակույթը: | • 30.10.2023 | |
| | | Սովորողների մոտ մեդիագրագիտության հմտությունների զարգացում | • Սովորողների մոտ մեդիագրագիտության հմտությունները կզարգանան ուսումնական նախագծերի իրականացման միջոցով: | • Սովորողները կկարողանան իրականացնել ուսումնական նախագծեր:<br>• Սովորողները կկարողանան կողմնորոշվել մեդիա տարածքում: | • 30.10.2023 | |
| | | Ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվի ուսուցիչների դասավանդման | • Կիրականացվի աջակցություն պարտադիր ատեստավորման համար կազմակերպվող վերապատրաստումներում ազգային | • Պարտադիր ատեստավորման համար կազմակերպվող վերապատրաստումներում ազգային | • 30.10.2023 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | մեթոդիկայի վերաբերյալ վերապատրաստումներ | փոքրամասնությունների մայրենի լեզվի ուսուցիչների ներգրավվման համար:<br>• Կկազմակերպվեն մշակութային, ազգագրական միջոցառումներ ազգային փոքրամասնությունների սովորողների մասնակցությամբ: | փոքրամասնությունների մայրենի լեզվի ուսուցիչների համար կազմակերպվել են առանձին դասընթացներ:<br>• Կազմակերպվել են մշակութային, ազգագրական միջոցառումներ ազգային փոքրամասնությունների սովորողների մասնակցությամբ: | | |
| | | Սփյուռքի ուսուցիչների համար ուսումնական նյութերի մշակում նաև արևմտահայերեն | • Կմշակվեն նյութեր սփյուռքի ուսուցիչների համար: | • Սփյուռքի ուսուցիչները կկարողանան օգտագործել մշակված նյութերը: | • 30.10.2023 | |
| | | Կրթության մեջ նորարարությունների ուսումնասիրություն, մեթոդների և ռազմավարությունների ներդրման արդյունքների գնահատում: | • Կիրականացվի նորարարությունների մեթոդների և ռազմավարությունների ներդրման արդյունքների ուսումնասիրություն և վերլուծություն: | • Կներկայացվի նորարարությունների մեթոդների և ռազմավարությունների ներդրման արդյունքների հետազոտությունների իրականացման մասին հաշվետվություն: | • 30.11.2023 | |
| | Ընդամենը | | | | | 334 714 000 |
| | ԱԱՀ | | | | | 66 942 800 |
| | Ընդամենը | | | | | 401 656 800 |

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011005403
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

_______________ Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Կրթության զարգացման նորարարական ազգային կենտրոն» հիմնադրամ
ք. Երևան, Տիգրան Մեծ 67
ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 220303350429000
ՀՎՀՀ 02657678
Գործադիր տնօրենի ժ/պ՝

_______________ Ա.Ծորոյան
(ստորագրություն)
Կ.Տ